

Տաթև համայնքի սոցիալական ոլորտի ծրագրերը

1. Տաթև համայնքի սոցիալական կարիքները

2021թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի» և «Ընտանիք և Համայնք» ՀԿ-ի հետ համատեղ Հիլֆավերկ Ինթերնեյշնի և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ՝ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների» եռամյա ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի Գորիս, Միսիան և Տաթև խոշորացված համայնքներում իրականացրել է համայնքների սոցիալական կարիքների ուսումնասիրություն: Կարիքների գնահատումն իրականացնելիս օգտագործվել են փաստաթղթերի ավանդական վերլուծության, փորձագիտական հարցումների, ինչպես նաև ծառայություններից օգտվողների հետ ֆոկլոր- խմբային քննարկումների մեթոդները: Ֆոկլոր-խմբային քննարկումներին մասնակցել են հետևյալ սոցիալական խմբերը՝ աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք և խառը խմբերի ներկայացուցիչներ: Իրականացվել են նաև խորին հարցազրույցներ վերոնշյալ համայնքների մասնագիտացված կառույցների ներկայացուցիչների հետ:

Թիրախային համայնքներում իրականացված ուսումնասիրության արդյունքում դուրս են բերվել ներքոնշյալ հիմնական ընդհանուր խնդիրները՝ ներառյալ ենթակառուցվածքային կամ տնտեսական բնույթի, որոնք անուղղակի (բացասական) ազդեցություն ունեն սոցիալական դաշտի վրա:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում Տաթև խոշորացված համայնքում գործունեություն ծավալող պետական և մասնավոր տարբեր կառույցների ներկայացուցիչներից ԳՈՒՄ ՀԿ-ի գլխավորությամբ 2021թ-ին ձևավորվել է միջոլորտային գերատեսչական ցանց, որը, հիմք ընդունելով համայնքում իրականացված սոցիալական կարիքների ուսումնասիրության արդյունքները, մշակել է Տաթև համայնքի տեղական սոցիալական պլանը:

Տաթև խոշորացված համայնքում բացահայտված խնդիրներն են՝

1. Գործազրկություն, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ

1.1. Աշխատանք գտնելու հարցում առավել խոցելի են՝

- **40-ից բարձր տարիք ունեցողները**, հատկապես կանայք, քանի որ գործատուները հիմնականում ցանկանում են աշխատանքի ընդունել ավելի երիտասարդ աշխատողների:
- **Հաշմանդամություն ունեցող անձինք**, քանի որ գործատուները խուսափում են աշխատանքի ընդունել հաշմանդամներին, նույնիսկ աշխատավարձի մասնակի փոխհատուցման պայմանով:

- **Հաշմանդամություն ունեցող անձանց խնամողները.** Համայնքում չկան այնպիսի ծառայություններ, որոնք կիրականացնեն հաշմանդամություն ունեցող մարդկանց խնամքը մինչև ընտանիքի անդամը աշխատանքից վերադառնա:
- **Երիտասարդները** – Համայնքում առկա աշխատատեղերի սղության և սահմանափակ հնարավորությունների պատճառով երիտասարդները ձգտում են աշխատանք գտնել Երևան քաղաքում:

1.2. Ժամանցի, ակտիվ շփման կարիքի բավարարման համար հնարավորությունների պակասը.

- Տարեցները կարիք ունեն շփման, ինքնաարտահայտման, իրենց գիտելիքներն ու հմտություններն իրացնելու: Այդ պատճառով կարիք են ունենում մի վայրի ու միջավայրի, որտեղ կարող են հավաքվել, գրուցել, մասնակցել որոշակի միջոցառումների, իրենք կատարեն որոշակի աշխատանքներ, իրենց գիտելիքներն ու հմտությունները փոխանցեն երիտասարդներին, սակայն նման հնարավորություն չկա:
- Երեխաների և երիտասարդների համար զարգացման և ժամանցի ապահովման հնարավորությունները խիստ անհամապատասխան են պահանջարկին և տեսականու արդիական ձևերին, որոնք հասանելի են Երևանում և մի քանի խոշոր քաղաքներում:

Կարիքները վերաբերում են՝

- արդիական մասնագիտությունների հետ կապված արտադպրոցական խմբակների ստեղծմանը (ծրագրավորում, դիզայն, անիմացիա, ռոբոտաշինություն և այլն),
- կրթական կենտրոնների հիմնմանը,
- երեխաների նախասիրությունների և հետաքրքրությունների բացահայտման համար անհրաժեշտ ու տարբեր հմտությունների զարգացման համար խմբակների ստեղծման անհրաժեշտությանը,
- երիտասարդների համար ոչ ավանդական և ոչ ֆորմալ կրթական հնարավորությունների ստեղծմանը:

2. Սոցիալական աջակցության ծառայությունների սակավություն, մարդկանց կարիքներին անհամապատասխանություն, դրանց տեսականու ծածկույթի անբավարարություն, մատչելիության խնդիր

- Սոցիալապես անապահով ընտանիքները, որոնք թոշակ կամ նպաստ չեն ստանում և տեղեկացված էլ չեն միանվագ և պարբերաբար տրամադրվող դրամական օգնություն ստանալու կարգի մասին:

3. Մասնագիտացված ծառայությունների անբավարարություն և ցածր հասանելիություն:

3.1. Մատուցվող սոցիալական ծառայություններից բավարարվածության խնդիրը

- Բոլոր համայնքներում դրամական՝ աղքատության, երեխայի խնամքի համար տրվող և այլն նպաստներից օգտվող շահառուները նշում էին այդ նպաստների չափի՝ կյանքի նվազագույն պայմանների ապահովման համար պահանջվող չափի հետ խիստ անհամապատասխանության խնդիրը, դժգոհ էին նպաստի չափերից այն հիմնավորմամբ, որ այն թույլ չի տալիս ընտանիքի համար որևէ էական հարց լուծել՝ անգամ երեխաների համար

նվազագույն սննդապահովման հարցը: Անշուշտ, նույնը վերաբերում էր նաև կենսաթոշակի, հաշմանդամության թոշակի և այլ դրամական աջակցության չափերին:

- Հարցվածները դժգոհություն էին հայտնում իրենց տարածքում մասնագիտացված սոցիալական ծառայությունների բացակայությունից/պակասից, մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների, տարեցների, երիտասարդների համար, ինչպես նաև համայնքում զարգացնող/խթանող ծառայությունների անբավարարությունից: Բացի համընդհանրական ղպրոց, պոլիկլինիկա, մանկապարտեզ (ոչ բավարար տեղերով) և գործող մեկ կամ երկու առանձին ծառայությունների, որոնք մատուցվում են ՀԿ-ների կողմից և ըստ էության կայուն չեն, այլ ծառայություններ համայնքներում չկան:
- Խոշորացված համայնքների պարագայում հիմնականում գործող ծառայությունները առկա են հենց վարչական կենտրոնում, մինչդեռ մյուս տարածքներում/գյուղերում խիստ անհամաչափ է ծառայությունների տեղակայումը, իսկ գործող ծառայությունները մոբիլ-արտագնա տարբերակներ չունեն: Ստացվում է, որ ծառայությունների կարիք ունեցող մեծ թվով մարդիկ դուրս են մնում ծառայություններից:
- Համայնքներում առկա է թեքահարթակների խնդիր. համայնքի ոչ բոլոր հատվածներում կան թեքահարթակներ, եղածներն են ճիշտ չեն կառուցված:

3.2. Մասնագիտական ներուժի խնդիրը համայնքներում

- Անհրաժեշտ են լավ վերապատրաստված հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ, էրգոթերապևտներ, ֆիզոթերապևտներ:
- ***Ներառականության պակաս.*** Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար բացի մասնագիտական ծառայությունների բացակայությունից, բացակայում է նաև կրթական հաստատություններում ներառական միջավայրը:

4. Համայնքի ֆիզիկական պայմանների հետ կապված խնդիրներ.

- ***Անվտանգ խաղահրապարակների սակավություն/անբավարարությունը.*** Երեխաները չունեն հարմարեցված խաղահրապարակներ, ոչ բոլոր բակերում են ստեղծված անվտանգ պայմաններ երեխաների խաղալու համար:
- ***Մշակույթի տան բացակայությունը.*** Շինուհայր բնակավայրի ամենախոցելի տեղը մշակույթի տան և մշակութային կյանքի բացակայությունն է: Ոչ շենք կա, ոչ էլ մշակութային կյանքն է ակտիվ:
- ***Թափառող շների հետ կապված հարցերը.*** Բնակիչները վախենում են երեկոյան ժամերին դուրս գալ տներից, չկա կառույց ԹԿՎԿ, որը կարողանա զբաղվել թափառող շների հարցով:

2. Տաթև համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները

Տաթև համայնքը աշխարհի ամենագողտրիկ անկյուններից մեկն է, որն աչքի է ընկնում իր չնաշխարհիկ բնությամբ, անմահական քաղցրահամ սառնորակ ջրով և բարի, աշխատասեր և հյուրասեր բնակիչներով: Նրանցից յուրաքանչյուրը խոր արմատներով կապված է իր հող ու ջրին, քանի որ իրենց անխոջ աշխատանքի շնորհիվ կարողացել են համայնքը զարգացնել ու դարձնել Հայաստանի ամենազարգացած զբոսաշրջային գյուղական համայնքներից մեկը: Բոլոր բնակավայրերը բարեկարգ ներհամայնքային ճանապարհներով կապված են միմյանց, գործում է ներհամայնքային տրանսպորտ: Համայնքի բոլոր բնակիչները զբաղված են իրենց նախընտրած ոլորտում՝ զբոսաշրջություն, նորարարական գյուղատնտեսություն/ինտենսիվ այգիներ, խելացի անասնազուբեր, ջերմոցային տնտեսություններ/, վերամշակող արդյունաբերություն/մրգի և բանջարեղենի մշակման գործարաններ/: Երեխաները հաճույքով հաճախում են նոր կառուցված մոդուլային դպրոցներ և մանկապարտեզներ, գործում են երեխաների և երիտասարդների զարգացման կենտրոններ, մարզադպրոց և մշակույթի կենտրոններ: Հիմնական դպրոցն ավարտելուց հետո երեխաների մի մասը ուսումը շարունակում են համայնքի քոլեջում, ստանում են գյուղատնտեսի, անասնաբույժի, զբոսավարի, համակարգչային օպերատորի մասնագիտություններ: Տարեցներն իրենց վաստակած հանգիստը վայելում են զբաղմունքի կենտրոններում կամ ստանում են արժանապատիվ սոցիալական ծառայություն: Ամռանը երեխաներն իրենց հանգիստը վայելում են ամառային ճամբարային ավանում, որտեղ աշխատում և իրենց պրակտիկան են անց կացնում համայնքի ուսանողները: Համայնքի բնակիչներն իրենց խաղաղ երեկոյան հանգիստն անց են կացնում գեղեցիկ կանաչապատ զբոսայգիներում և սրճարաններում: Համայնքի բնակիչներն առողջապահական ծառայությունները ստանում են համայնքի ԱՄՊԿ-ում, որը հագեցած է ժամանակակից սարքավորումներով, աշխատում են հոգատար և բարձրակարգ բուժաշխատողներ:

Նշված տեսլականին հասնելու համար սահմանվել են հետևյալ նպատակները՝

- Նպաստել սոցիալապես խոցելի ընտանիքներին՝ կազմակերպելով երկարօրյա ուսուցում այդ ընտանիքների երեխաների համար, համայնքային զարգացման կենտրոնում, զարգացնելով երեխաների ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները:
- Նպաստել տարեցների սոցիալական պաշտպանվածությանը համայնքում՝ կազմակերպելով տնային այցելությունների շարժական ծառայություններ
- Նպաստել համայնքում կրթության շարունակականության ապահովմանը՝ կերտելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիքներով և հմտություններով զինված քաղաքացիներ:

Ելնելով համայնքի սոցիալական կարիքների գնահատման արդյունքներից, ինչպես նաև ոլորտի տեսլականից և սահմանված նպատակներից, աշխատանքային խմբերի կողմից

քննարկվել և որոշվել է սոցիալական ծրագրերի ցանկը (Աղյուսակ 1.), որոնք ներկայացնում են համայնքի 2022-2027թթ. ՀԶՀԾ-ի սոցիալական պաշտպանության բաժնի ծրագրերը: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը ենթադրում է ֆինանսավորում տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից՝ համայնքի կողմից համաֆինանսավորմամբ:

Աղյուսակ 1. Համայնքի 2022-2026թթ. սոցիալական ծրագրերի ցանկը

h/h	Խնդիրները	Միջանկյալ արդյունքները	Անհրաժեշտ գործողությունները	Պահանջվող ռեսուրսները
4	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության	Սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների լրացուցիչ կրթության համար վճարների փոխհատուցում	<ul style="list-style-type: none"> ✓ Բրազեկել համայնքում կենտրոնի գործունեության և նպատակների մասին: ✓ Մինչև նոր ուսումնական տարին համայնքում ստեղծել 100 երեխաների համար նախատեսված զարգացման և երկարօրյա ուսուցման լրացուցիչ ծառայություններ: ✓ Կազմակերպել ծառայության տրանսպորտային հասանելիությունը 	Կամավորներ, Համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ , միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք
		Տարեցների սոցիալական պաշտպանվածություն՝ տնային այցելությունների միջոցով	<ul style="list-style-type: none"> ✓ Բրազեկել համայնքում միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող միայնակ անձանց տունայցեր կազմակերպելու ծառայության մասին. ✓ 50 տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար կազմակերպել տունայցեր ընտրված համապատասխան մասնագետների կողմից/բուժքույր, սոցիալական աշխատող, կամավորներ/: ✓ Համապատասխան որակյալ մասնագետների միջոցով աշխատանքների կազմակերպում և իրականացում/ բուժքույր, սոցիալական աշխատող, կամավորներ/ 	
	Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոն	<ul style="list-style-type: none"> ✓ Համայնքում աշխատաշուկայի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում ✓ Շահառուների իրազեկում և վերապատրաստումների իրականացում ✓ Համագործակցություն համայնքում գործող կազմակերպությունների հետ՝ ներառյալ համայնքային, մարզային և հանրապետական կառույցները ✓ Ծառայությունների տրամադրման համար համապատասխան հնարավորությունների ստեղծում 		

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 1.

« Սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների լրացուցիչ կրթության հնարավորությունների ստեղծում»

(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Օրագրի անմիջական նպատակ	Նպաստել սոցիալապես խոցելի ընտանիքներին՝ ներգրավելով երեխաներին երկարօրյա ուսուցման մեջ, զարգացնելով երեխաների ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները:						
	Շառայությունից օգտվող երեխաների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	100	120	120	150	150
	1. Համայնքի բնակիչները տեղեկացված են կենտրոնի գործունեության մասին						
	Իրազեկված բնակիչների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	500	700	700	1000	1000
	2. Սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները ստանում են լրացուցիչ կրթություն						
	Լրացուցիչ ուսուցման առարկաների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2021		2022	2023	2024	2025	2026	
-		4	4	5	5	6	
3. Առկա է ներհամայնքային տրանսպորտ բնակավայրերի համար ծառայության մատչելիությունը ապահովելու համար							
Բնակավայրերի թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2021	2022	2023	2024	2025	2026	
	-	5	5	5	5	7	
Օրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Իրազեկման արշավների կազմակերպում</p> <p>1.2 Շառայության մասին տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Շառայության մատուցող կազմակերպության հետ լրացուցիչ պարապմունքների ցանկի հստակեցում</p> <p>2.2 Կազմակերպության հետ պայմանագրի կնքում</p> <p>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>3.1 Շառայությունից օգտվող երեխաների քարտեզագրում և չվացուցակի սահմանում</p> <p>3.2 Երեխաների ծնողներին և վարորդի հրահանգավորում</p> <p>3.3 Տրանսպորտային միջոցի հարմարեցում հատուկ կարիքներով անձանց համար</p>						
Օրագրի բյուջեն	12 մլն դրամ						

Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքում առկա կրթական հաստատություն
Օրագրի հիմնական ռիսկերը	Ծնողների թյուր պատկերացումները կրթության կարևորության մասին
Օրագրի հիմնական շահառուները	Խոցելի ընտանիքներ
Օրագրի սկիզբ և ավարտ	2022-2026
Օրագրի համառոտ նկարագրություն	<p>Խոցելի ընտանիքների և աշխատող ծնողների դպրոցահասակ երեխաները, հնարավորություն չունենալով ինքնուրույն դասապատրաստում իրականացնելու, չեն ստանում որակյալ կրթական ծառայություններ: Ծնողները տարբեր պատճառներով ի վիճակի չեն օգնել նրանց, ուստի երեխաները դասի են ներկայանում անպատրաստ, անտարբեր են դառնում ուսման և դպրոցի նկատմամբ: Բացի այդ, դասերից հետո, երեխաները դուրս են մնում վերահսկողությունից, քանի որ ծնողների մի մասը զբաղված են գյուղատնտեսական աշխատանքներով, մի մասն էլ պարզապես անտարբեր են երեխաների առօրյայի նկատմամբ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 նոյեմբերի 2010 թվականի N 1496-Ն որոշումը, որով սահմանվում է վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի կարգը, նախատեսվում է համայնքի օժանդակությամբ՝ վճարների փոխհատուցման միջոցով, ներգրավել սոցիալապես ընտանիքների երեխաներին լրացուցիչ կրթական ծրագրերում:</p> <p>Նման ծրագրերի առկայությունը կլուծի երեխաների ուսման առաջադիմության, ինչպես նաև երեխաների ժամանցի հարցը: Երեխաները կստանան լրացուցիչ կրթական ծառայություններ, ձեռք կբերեն նոր գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, կձևավորվի նոր արժեքային համակարգ:</p> <p>Նման ծառայությունների առկայության անհրաժեշտությունը եղել է ծնողների պահանջով:</p>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 2.
« Տարեցների սոցիալական պաշտպանվածության՝ տնային այցելությունների միջոցով»
(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Օրագրի անմիջական նպատակ	Նպաստել տարեցների սոցիալական պաշտպանվածությանը՝ համայնքում կազմակերպելով տնային այցելությունների շարժական ծառայություններ:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
	-	50	60	70	70	80	
Օրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքի բնակիչները տեղեկացված են համայնքում գործող ծառայության մասին						
	Ծառայությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
	-	500	500	600	600	700	

	2. Տարեցները ստանում են մասնագիտական ծառայություններ և խնամք իրենց տանը						
	Ծառայությունների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	3	3	5	5	5
	3. Համայնքում գործում է տարեցների համար մոբիլ ծառայություն						
	Կատարված տնայցերի քանակ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	600	1200	1400	1400	1600
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Իրազեկման արշավների կազմակերպում</p> <p>1.2 Ծառայության մասին տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Մատուցվող ծառայությունների ցանկի հստակեցում</p> <p>2.2 Մասնագետների ներգրավում և վերապատրաստում</p> <p>2.3 Մասնագետների կողմից մատուցվող ծառայությունների գրաֆիկի սահմանում</p> <p>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>3.1 Տարեցների համար ծառայությունների մատուցման հրահանգավորում</p> <p>3.2 Տարեցների հետ համատեղ ծրագրերի պլանավորում</p> <p>3.1 Կամավորների հավաքագրում</p>						
Ծրագրի բյուջեն	12 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման մասնագետներ, տրանսպորտ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ, իրազեկման ցածր մակարդակ:						
Ծրագրի հիմնական շահառուները	Միայնակ, հատուկ ծառայությունների կարիք ունեցող տարեցներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2026						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վերջին տարիներին տարեցների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք՝ մոտ 300 հոգի, տարբեր պատճառներով, մնացել են միայնակ և անտեսված՝ հիմնականում արտագաղթով պայմանավորված: Նրանք չեն օգտվում մի շարք առողջապահական, խնամքի, տարրական սոցիալական ծառայություններից: Չունեն տարրական իրավական գիտելիքներ, ինչի պատճառով էլ չեն կարողանում օգտվել անգամ պետության կողմից իրենց տրամադրվող ծառայություններից (օրինակ՝ անվճար տրամադրվող դեղորայքից): Տարիքով պայմանավորված՝ նրանք չեն կարողանում ինքնուրույն լուծել իրենց կենցաղային կարիքները՝ օգտվել խանութից, առողջապահական կենտրոնից:						

Ծ Ր Ա Գ Ը Ի Ա Ն Զ Ն Ա Գ Ի Ը Ն 3.

« Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոն »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել համայնքում կրթության շարունակականության ապահովմանը՝ կերտելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիքներով և հմտություններով զինված քաղաքացիներ:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
-	40	40	50	50	70		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Գործիսի աշխատաշուկայի իրականացված վերլուծություն						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	5	5	5
	2. Համայնքի բնակիչները տեղեկացված են և օգտվում են կենտրոնի ծառայություններից						
	Կենտրոնի մասին տեղեկացված բնակիչներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	500	500	700	700	800
	3. Համայնքում գործող կառույցների հետ արդյունավետ համագործակցություն						
	Համագործակցող կազմակերպությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2022	2023	2024	2025	2026
		-	5	10	15	15	17
4. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ							
Մեկյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2021	2022	2023	2024	2025	2026	
	-	2	2	2	2	2	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	<p>1.1 Համայնքում թափուր աշխատատեղերի քարտեզագրում</p> <p>1.2 Թափուր աշխատատեղերը համալրելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների վերլուծություն</p> <p>1.3 Համայնքում գործ փնտրողների գիտելիքների և հմտությունների համադրում աշխատաշուկայում պահանջվող գիտելիքների և հմտությունների հետ</p> <p>1.4 Վերլուծության հիման վրա հաշվետվությունների կազմում և հրապարակում</p>						
	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1 Իրազեկման արշավների կազմակերպում						
	2.2 Ծառայության մասին տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում						
	3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	3.1 Համայնքում գործող կառույցների հետ համագործակցության հուշագրերի ստորագրում						
	3.2 Համագործակցող կազմակերպությունների հետ թափուր աշխատատեղերի և աշխատանք փնտրողների վերաբերյալ տեղեկատվության պարբերական փոխանակում						

	<p>4-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>4.1 Ծառայության համար համապատասխան տարածքի ընտրություն</p> <p>4.2 Տարածքի բարեկարգում և հարմարեցում</p> <p>4.3 Գույքի ձեռք բերում և տեղադրում</p>
Ծրագրի բյուջեն	12 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքում տնտեսական ակտիվության նվազում, տնտեսական ճգնաժամ
Ծրագրի հիմնական շահառուները	Երիտասարդներ, գործազուրկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2026
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Վերջին տարիներին փոխվել է մասնագիտությունների նկատմամբ պահանջարկը: Միջին մասնագիտական կրթության պահանջարկը գերակշռում է, ինչը նշանակում է, որ միջին մասնագիտական կրթություն ունեցողն ավելի շուտ կգտնի իր մասնագիտական հմտություններին համապատասխան աշխատանք, քան բարձրագույն կրթություն ունեցողը: Չնայած դրան, բնակչության շրջանում առաջնահերթ է դիտարկվում բուհական կրթությունը: Համայնքում Միասնական սոցիալական ծառայության/ՄՄԾ-ի զբաղվածության տարածքային բաժնի կողմից պարբերաբար չի իրականացվում աշխատաշուկայի վերաբերյալ վերլուծություն, և իրենց հասանելի ինֆորմացիային բնակիչները իրազեկ չեն, հատկապես աշակերտները և պատանիները:</p> <p>Համայնքում թափուր աշխատատեղերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկան համապատասխան մասնագետներ, այսինքն համայնքում կա առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն:</p> <p>Համայնքում պարբերաբար տարբեր մասնագետներ ունենում են վերապատրաստման կարիք, և չվերապատրաստելով աշխատաշուկայում մրցակցությունից դուրս են մնում:</p> <p>Առաջարկվող ծրագրի միջոցով նախատեսվում է նպաստել տարբեր սոցիալական խմբերի՝ կանանց, երիտասարդների, պատերազմի և համաճարակի պատճառով գործազուրկ դարձած, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը խմբերի վերապատրաստման և ուղղորդման միջոցով:</p>